

եւ յայս հաւատացեալ՝ մկրտիմք. եւ ակն ունիմք
 հողւոյն կենդանութեան, եւ մերոյին փրկու-
 թեան՝ ըստ անսուտ խոստման Տեառն թէ՛ «որ 235
 հաւատայ եւ մկրտի՝ կեցցէ:», Դարձեալ ի կարգ
 անդր ի վեր ելանելով՝ ասեմք, թէ որովհետեւ
 ունիմք մեր հաւատ եւ մկրտութիւն. քաջիւշ
 այնոքիկ նախասացեալք, ոչ պարտին աշխատ լի-
 նիլ առ մեզ, այլ առաւել առ այնոսիկ՝ որք ոչ 240
 կարդան զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
 եւ ոչ խոստովանին զնա՝ Աստուած, եւ ոչ ի ան-
 բնական չորս հասարակ, եւ ոչ ունին զՔրիստո-
 սական կնիք յանձինս իւրեանց. եւ ոչ ճանաչեն
 զխորհուրդս եկեղեցւոյ, եւ ոչ ընդունին զաստուա- 245
 ծաշունչ գիրս՝ զհին եւ զնոր կտակարանս եւ ոչ
 գիտեն զանուն առաքելոց եւ մարգարէից եւ վար-
 դապետաց, եւ ծիծաղին ի վերայ անհաս խորհրդ-
 րոյ քրիստոնէիցս, եւ զաւանցանս վարկանին
 զպաշտելի դաւանութիւն քրիստոնէից, որ առ 250
 ամենասուրբ երրորդութիւնն, եւ ի տնօրէնու-
 թիւնսն միածնի որդւոյն, եւ ի սուրբ Կոյսն Մա-
 րիամ՝ Աստուածածինն, եւ ի պարծանս քրիստո-
 նէից՝ ի սուրբ եւ ի կենսակիր եւ յամենազօր
 խաչն, եւ ի պատկերս տէրունականս եւ ամենայն 255
 սրբոց. զորս փոքր համարեն, աւաղելով զքրիս-
 տոնեայս իրրեւ զմոլորեալս: Նոքա զայս ամենայն
 տեսանելով եւ լսելով ոչ ինչ համարեն, եւ ոչ
 ցաւ է նոցա. այլ անփոյթ ունելով զնոսա, զմեզ
 շնչապատեալ պաշարեն, յարկանել ի մէջ քրիստո- 260
 նէից աղմուկ խռովութեան. եւ փոխանակ շինու-
 թեան եւ հաստատութեան՝ արկանեն յորով գայ-
 թակութիւնս, ասելով միշտ յականջս անկատարից
 եւ անորհուրդ բռնի, թէ ոչ է պատարագն ձեր՝
 պատարագ, եւ մկրտութիւնն՝ մկրտութիւն. նոյն 265
 պէս եւ խոստովանութիւնն եւ ապաշխարութիւնն
 եւ այլ խորհուրդք. յորոց բանից նեցուկ առեալ
 թուլամորթք՝ յողորմեք եւ անհաստատունքն,